Գործընթացով զբաղվող գրասենյակը

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

(Ուղեցույց՝ համաձայն AsylG-ի («Ապաստան ստանալու գործընթացի մասին » օրենքի) 22-րդ բաժնի 3-րդ պարբերության)

Ազգանուն՝	
Անուն՝	
Ծննդյան ամսաթիվ՝	
Ազգություն՝	

Ֆայլի համարը՝
(Խնդրում ենք հստակ նշել)

Հարգելի ապաստան փնտրող,

Դուք դիմել եք Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում ապաստան ստանալու համար: Այդպես վարվելով՝ Դուք, հաստատում եք, որ պաշտպանություն եք փնտրում հետապնդումից կամ անխուսափելի լուրջ վտանգից:

Ձեր ապաստան ստանալու հայցադիմումի քննությունը և ապաստան ստանալու իրավունքի ճանաչումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ Դուք պաշտոնական դիմում եք ներկայացնում: Դուք պարտավոր եք այս դիմումն անձամբ ներկայացնել Ներգաղթի և փախստականների հարցերով զբաղվող դաշնային գրասենյակի Ձեզ համար պատասխանատու մասնաճյուղ: Միայն այդ դեպքում կիրականացվի ապաստան ստանալու գործընթացը: Ձեզ հնարավորություն կտրվի հիմնավորել Ձեր ապաստան ստանալու հայցադիմումը լսումների շրջանակներում:

Ձեր հայցադիմումը ներկայացնելուց հետո Դուք կստանաք բնակության թույլտվություն, որպեսզի վարվի Ձեր՝ ապաստան ստանալու գործընթացը, ինչը թույլ կտա Ձեզ մնալ ընդունման կենտրոնի տարածքում:

Դուք նախ կտեղափոխվեք ընդունման կենտրոն, որը կծառայի Ձեզ որպես բնակության վայր ապաստան ստանալու վարույթի ընթացքում: Ընդունման կենտրոնում Դուք նաև կտեղեկացվեք Ներգաղթի և փախստականների հարցերով զբաղվող դաշնային գրասենյակի մասնաճյուղի

մասին, որտեղ Դուք պետք է ներկայացնեք Ձեր ապաստան ստանալու հայցադիմումը: Հետևաբար, խնդրում ենք անմիջապես կապ հաստատել հետևյալ ընդունման կենտրոնի հետ ամենաուշը ..... :

Ընդունման կենտրոն

.....

.....

Եթե Դուք չեք ենթարկվում այս պահանջին, ապա Ձեր ապաստան ստանալու հայցադիմումը կհամարվի հետ կանչված և ապաստան ստանալու վարույթ չի իրականացվի: Եթե մեկ այլ եվրոպական երկիր է պատասխանատու քննել Ձեզ պաշտպանելու պահանջը, ապա Դաշնային գրասենյակը կորոշի, որ Դուք տեղափոխվեք այնտեղ: Այս որոշումը նաև կկայացվի այն դեպքում, երբ Դուք անձամբ չեք ներկայանում՝ վերը նշված պայմանավորվածության համաձայն:

Ես ստացել եմ այս ուղեցույցն այսօր:

Ուղեցույցը թարգմանված է հայերենով այսօր, և ես հասկանում եմ դրա բովանդակությունը:

....

Վայր Ամսաթիվ Դիմողի / իրավաբանական ներկայացուցչի ստորագրությունը